ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 03-Ի ԹԻՎ 230-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդային եղանակով օտարելու նպատակով ստեղծել աճուրդային հանձնաժողով՝ համաձայն սույն որոշման անբաժանելի մաս կազմող հավելվածի:
2. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Ֆ. Պետրոսյանը:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 03-ի <Աճուրդային հանձնաժողով ստեղծելու և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 17-ի թիվ 490-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին> թիվ 230-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

20 23թ. հունվար 25
ք. Արմավիր

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2023 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի
ԹԻՎ 0190-Ա ՈՐՈՇՄԱՆ

ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Աճուրդի կազմակերպիչ՝ Դ. Խուդաթյան՝ Արմավիրի համայնքի ղեկավար

Անդամներ՝

Ա. Աբգարյան՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ

Դ. Ավետիսյան՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

Հ. Դոլինյան՝ Ավագանու անդամ

Ռ. Մարգարյան՝ Ավագանու անդամ

Աճուրդավար՝ Ֆ. Պետրոսյան՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Արձանագրող՝ Ա. Հովհաննիսյան՝ Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0191-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐԱՅԻԿ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԻՆ ՃՇՏՎԱԾ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Արայիկ Կոստանյանի 21.11.2022թ. թիվ 6199 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արայիկ Կոստանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լուկաշին գյուղում գտնվող 04-047-0016-0001 կադաստրային ծածկագրով գույքին տալ ճշտված հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Լուկաշին գյուղ, 1-ին փողոց, 1/12:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հունվարի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0192-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՔՐԻՍՏԻՆԵ ԹԱԹՈՅԱՆԻՆ, ԱՐՈՒՍ ԹԱԹՈՅԱՆԻՆ ԵՎ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը և հիմք ընդունելով Քրիստինե Թաթոյանի 09.01.2023թ. թիվ 0077 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի 04-043-0037-0018 կադաստրային ծածկագրով հողամասում Քաղաքացի Քրիստինե Թաթոյանին /ծնված 01.08.1977թ./, Մանվել Հարությունյանի /ծնված 05.11.1967թ./ և Արուս Թաթոյանին /ծնված 05.04.1948թ./ սեփականության իրավունքով պատկանող 1400.0 քմ տնամերձ հողամասին կից ավել օգտագործվող 280.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան սեփականության իրավունքով, իսկ 510.0 քմ մակերեսով հողամասն օտարել ուղիղ վաճառքի միջոցով, հողամասի կադաստրային արժեքի 30 %-ի չափով՝ 1 քմ հողամասի համար՝ 366.3 ՀՀ դրամ, ընդհանուր 186813 /մեկ հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր տասներեք / ՀՀ դրամ:

2.Քրիստինե Թաթոյանին, Արուս Թաթոյանին և Մանվել Հարությունյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք Մայիսյան գյուղ 04-043-0037-0018 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, Մայիսյան գյուղ , 3-րդ փողոց, 67:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Մայիսյան գյուղի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ.ՍԱՐԳՍՅԱՆ

2023 թ.հունվար 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0193-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ 19 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈՎԻԿ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՐԴԻՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 22.1 կետով, հիմք ընդունելով Հովիկ Անդրանիկի Մարդիրյանի 05.12.2022 թ. թիվ 6539 դիմումը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը /2020 թվականի սեպտեմբերի 2-ի/ և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ. Նալբանդյան փողոցի 19 հասցեում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Հովիկ Անդրանիկի Մարդիրյանի /ծնված 26.01.1957թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի

Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Մ. Նալբանդյան փողոցի 19 հասցեում գտնվող գույքային միավորների՝ 685.4 քմ օրինական հողամասի վրա 1997թ. կառուցված 396.2 քմ մակերեսով բնակելի տան, 1997թ. կառուցված 36.6 քմ մակերեսով ավտոտնակի, 1997թ. կառուցված 19.4 քմ մակերեսով թռչնանոցների, 1997թ. կառուցված 15.5 քմ մակերեսով ծածկի նկատմամբ, իսկ խորդանոցը համարել ինքնակամ:

2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2023թ. հունվարի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0194-Ա

ԿՈՐՅՈՒՆ ՎԱԶԳԵՆԻ ԻԳԻԹՅԱՆԻՆ, ԼԱՈՒՐԱ ԹԵՄՈՒՐԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ, ԿԱՐԵՆ ԿՈՐՅՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆԻՆ, ԱՐՄԻՆԵ ԿՈՐՅՈՒՆԻ ԻԳԻԹՅԱՆԻՆ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով, հիմք ընդունելով Կորյուն Իգիթյանի 07.12.2022թ. թիվ 6587 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Կորյուն Վազգենի Իգիթյանին /ծնված 22.03.1960թ./, Լաուրա Թեմուրի Գալստյանին /ծնված 22.10.1961թ./,Կարեն Կորյունի Իգիթյանին /ծնված 19.01.1987թ./, Արմինե Կորյունի Իգիթյանին /ծնված 04.09.1989թ./ պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0145-0019 կադաստրային ծածկագրով 3700.0 քմ մակերեսով հողամասին կից ավել զբաղեցրած 100.0 քմ մակերեսով հողամասը անհատույց հատկացնել նրան՝ սեփականության իրավունքով:

2. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հունվարի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0195-Ա

ԱՐԹՈՒՐ ԱՐՄԵՆԱԿԻ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 48-րդ, 60-րդ և 76-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին» 2001 թ. ապրիլի 12-ին թիվ 286 որոշման 46.2 կետի ա) ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արթուր Արմենակի Շահնազարյանի 02.11.2022թ-ի թիվ 5865 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի սեփականություն հանդիսացող Արմավիր քաղաքի Հ. Բաղրամյան փողոց 33/21 հողամաս գտնվող խառը կառուցապատման տարածքից 0.00199 հա մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով հատկացնել Արթուր Արմենակի Շահնազարյանին՝ ոչ հիմնական շինություն (ավտոտնակ) տեղադրելու նպատակով, համաձայն որոշման անբաժանելի մասը հանդիսացող հողամասի սխեմա-հատակագծի (կցվում է):

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնին Արթուր Արմենակի Շահնազարյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագիր: Պայմանագրով կառուցապատման իրավունքի ժամկետ սահմանել 10 տարի, իսկ կառուցապատման իրավունքի տարեկան վճար՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:

3.Սահմանել, որ կառուցապատման իրավունքի պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարում է Արթուր Արմենակի Շահնազարյանը՝ իր միջոցների հաշվին.
ա) ավտոտնակի տեղադրումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի վարչական տարածքում ոչ հիմնական շինությունների տեղադրման սահմանված տեղական տուրքը համայնքի բյուջե վճարելուց և ավտոտնակի էսքիզային նախագիծը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց հետո.

բ) ավտոտնակի տեղադրման հսկողությունը հանձնարարվում է Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիրի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, կոմունալ տնտեսության, համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2023 թ. հունվարի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0196-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 11-րդ, 13-րդ կետերի <<ա>> ենթակետով, 18-րդ կետի <<ա>> ենթակետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N 600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 5-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, և ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ Լիլիթ Ումուրշատյանի 07.07.2022 թվականի թիվ 3645 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Լիլիթ Ումուրշատյանի սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 20022020-04-0019) սեփականության Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 54-րդ թաղամաս 2 հասցեում 1200.0 քմ մակերեսով բնակելի նշանակության հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 318.55 քմ ներքին և 410.0 քմ արտաքին մակերեսով, ավտոտնակը՝ 49.6 քմ ներքին և 61.5 քմ արտաքին մակերեսով, ծածկոցները 69.3 քմ ներքին և 79.3 քմ արտաքին մակերեսով, խոհանոցը՝ 28.6 քմ ներքին և 38.0 քմ արտաքին մակերեսով, զուգարանը 1.7 քմ ներքին և 3.0 քմ արտաքին մակերեսով, լողավազանը 44.65 քմ ներքին և 57.0 քմ արտաքին մակերեսով, պարիսպները 35.0 քմ մակերեսով ճանաչել օրինական:

2. Ընդունել ի գիտություն, որ

1) կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Սահմանել, որ իքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 683.8 քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինության օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1673.0 ՀՀ դրամ ընդհանուր՝ 1143998 (մեկ միլիոն հարյուր քառասուներեք հազար ինը հարյուր ինիսունութ) ՀՀ դրամ:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի 54-րդ թաղամաս 2 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2022FSBJBP:

6.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

7.Սույն որշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հունվարի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0197-Ա

ՀԱՄԵՍՏ ՇԱՄՈՅԱՆԻՆ , ՄՈՒՇԵՂ ԹԱԹՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Համեստ Շամոյանի 08.12.2022թ թիվ 6596 դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Համեստ Շամոյանին և Մուշեղ Թաթոյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0026-0017 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրիմարզ, Արմավիր համայնք, գյուղ Արաքս (Արմավիրի շրջ.), 3-րդ թաղամասի 4-րդ փողոց, 4:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրան ցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2023 թ. հունվար 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 հունվարի 2023 թվականի N 0198-Ա

ԱԼԵՔՍԱՆ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ. դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, Ալեքսան Ալեքսանյանի 08.12.2022թ թիվ 6597 դիմումը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Ալեքսան Ալեքսանյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արաքս գյուղում գտնվող 04-016-0026-0016 կադաստրային ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր համայնք, գյուղ Արաքս (Արմավիրի շրջ.), 3-րդ թաղամասի 4-րդ փողոց, 6:

2.Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմավիր համայնքի ավագանու որոշմամբ սահմանված հասցեի տրամադրման վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

4.Սույն որոշումը
կարող է վարչական կարգով բողոքարկվել Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2023 թ. հունվար25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2023 թվականի N 0199-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 4-րդ կետով, 10-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի 1-ինև 2-րդենթակետով, Արմավիր համայնքի գլխավոր հատակագծով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Արմավիր համայնքինպատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 16 փողոց, 6 հողամասի հարևանությամբ գտնվող 0.0072 հա մակերեսով հողամասիգործառնականնշանակությունըփոփոխելբնակավայրի բնակելի կառուցապատումից՝հասարակական կառուցապատում:

2.Արմավիր համայնքին պատկանող ՀայաստանիՀանրապետությանԱրմավիրմարզի Արմավիր համայնքի գյուղ Սարդարապատ 16 փողոց, 6 հողամասի հարևանությամբ գտնվող 0.0072 համակերեսովհողամասինտալիսցեՀայաստանիՀանրապետությանԱրմավիրմարզ, Արմավիր համայնք, գյուղ Սարդարապատ 16 փողոց, 6/1:

3. Սույն որոշմամբ գույքային միավորին տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2023 թ. հունվարի 25
ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavir.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թվականի N 200-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԱՐԱՔՍ ԳՅՈՒՂԻ Մ. ԽԱՉՈՒՆՑԻ ՓՈՂՈՑ 80 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԵՎԻԿ ՆԱԶԱՐՅԱՆԻ, ԱՆԻ ՆԱԶԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ , 51-րդ կետերով, հիմք ընդունելով Արմավիր համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 05-ի թիվ 12 արտահերթ նիստի 205-Ն որոշումը, հիմք ընդունելով Լևիկ Զավենի Նազարյանի 14.12.2022թ. թիվ 6715 դիմումը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայքի Արաքս գյուղի 04-016-0023-0035 ծածկագրով հողամասում գտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Լևիկ Զավենի Նազարյանի /ծնված 10.07.1953թ./ Անի Լևիկի Նազարյանի /ծնված 27.04.1990թ./ սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայքի Արաքս գյուղի 04-016-0023-0035 ծածկագրով գույքային միավորների՝ 962.0 քմ օրինական հողամասի վրա 1987թ. կառուցված 134.5 քմ բնակելի տան, 1987թ. կառուցված 16.0 քմ մակերեսով

անասնաշենքի, 1987 թ. կառուցված 13.9 քմ մակերեսով մառանի, 1987թ. կառուցված 25.2 քմ մակերեսով ավտոտնակի, 1987թ. կառուցված 1.39 քմ մակերեսով պարիսպի, 1987 թ. կառուցված 1.0 քմ մակերեսով պարսպի նկատմամբ:

2.Լևիկ Զավենի Նազարյանին, Անի Լևիկի Նազարյանին պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայքի Արաքս գյուղի 04-016-0023-0035 ծածկագրով գույքին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ,Արմավիր համայք, Արաքս գյուղ, Մ. Խաչունցի փողոց 80:

3. Սույն որոշմամբ սահմանված իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արմավիր Մարզի Արմավիր համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար սահմանված տեղական վճարը համայնքի բյուջե վճարելուց հետո:

5.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Հայաստանի Հանրապետության Արմավիր Մարզի Արմավիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

2023թ. հունվարի 25
ք. Արմավիր